ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

ելից N104
24.12. 2015թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Մեծավան համայնքի ավագանու թիվ 38-42 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> դեկտեմբերի 2015 թվականի N 38-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Մեծավան գյուղական համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ			
3	ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՋԱՏ			
4	ՆՈՒՐՈՅԱՆ ԷՄՄԱ			
5	ՍՈԼՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
6	ՓԵԹԱՔՉՅԱՆ ՄԱՐԵՏԱ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2015թ.
գ. Մեծավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան գյուղական համայնքի ավագանու
2015 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 38 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20.000դրամ

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000դրամ 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40.000դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական

նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10.000դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար ՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150.000դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝_36.000դրամ. _____

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 40.000_դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 10.000_դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25.000դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500.000 րամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50.000_դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 8000 դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 1000 դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 2000 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

<<24>> դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> դեկտեմբերի 2015 թվականի N 39-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16. հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60. և 72. հոդվածներով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Մեծավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Մեծավան համայնքի ավագանու՝ «Մեծավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2015թվականի հունիսի 26-ի թիվ 20-Ա և «Մեծավան համայնքի ավագանու 2015թվականի հունիսի 26-ի թիվ 19-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2015թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 30-Ա» որոշումները:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ			
3	ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱԶԱՏ			
4	ՆՈՒՐՈՅԱՆ ԷՄՄԱ			
5	ՍՈԼՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
6	ՓԵԹԱՔՉՅԱՆ ՄԱՐԵՏԱ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

«24» դեկտեմբերի 2015թ.
գ. Մեծավան

ՀԱՎԵԼՎԱԾ

Մեծավան համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 24-ի թիվ *39*–Ա որոշման

Մեծավան գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 21
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Թիվ	*Պաշտոնի անվանումը*	*Հաստիքայի միավորների քանակը (դրույք)*	*Ամսական պաշտոնական դրույքը (դրամ)*
	Գյուղապետարան		
1	Համայնքի ղեկավար	1	216.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	107.0
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	107.0
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	107.0
5	Աշխատակազմի քարտուղար	1	135.0
6	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	92.4
7	Աշխատակազմի առաջատար մասնագետ	4	87.2
8	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	2	86.0
9	Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	2	80.0
	Տեխսպասարկման. անձնակազմ		
10	Հավաքարար	1	72.8
11	Դռնապահ	2	72.8
12	Պայմանագրային աշխատող/հնոցապահ/	*1*	72.8
13	Համակարգչային օպերատոր	*1*	72.8
14	Վարորդ	*1*	80.0
15	փականագործ	*1*	80.0
	Ընդամենը	*21*	

ԱԵԹԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> դեկտեմբերի 2015 թվականի N 40-Ն

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16. հոդվածի 3-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության 56. հոդվածով ՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2016թ. տարեկան բյուջեն՝

1.1 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳՅՈՎ՝ 112432.8 հազ.դրամ

Այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով՝ 112432.8 հազ. դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով՝ 13100.0հազ. դրամ

1.2 ԾԱԽՍԵՐԻ ԳՅՈՎ ՝ 147432.8 հազ.դրամ

Այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով՝ 112432.0 հազ. դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով՝ 48100.0 հազ. դրամ

2. Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2016թվականի տարեկան բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն թիվ 1 հատվածի:

3. Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2016թվականի տարեկան բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն թիվ 2 հատվածի:

4. Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակներն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն թիվ 3 հատվածի:

5. Հաստատել սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսերն ըստ առանձին ծրագրերի համաձայն թիվ 4 հատվածի:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ			
3	ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՋԱՏ			
4	ՆՈՒՐՈՅԱՆ ԷՄՄԱ			
5	ՍՈԼՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
6	ՓԵԹԱՔՉՅԱՆ ՄԱՐԵՏԱ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2015թ.
գ. Մեծավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. gmecavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> դեկտեմբերի 2015 թվականի N 41-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16. հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մեծավան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 30-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Մեծավան համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, տարերային աղետներից, հրդեհներից տուժած ընտանիքների դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ			
3	ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՋԱՏ			
4	ՆՈՒՐՈՅԱՆ ԷՄՄԱ			
5	ՍՈԼՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
6	ՓԵԹԱՔՉՅԱՆ ՄԱՐԵՏԱ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Հավելված
Մեծավան համայնքի ավագանու
2015թվականի դեկտմբերի 24-ի
թիվ 41-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ավետիսյան Աննա - 80.0հազար դրամ
2. Ղուկեյան Հայկանուշ -80.0 հազար դրամ
3. Դումիկյան Վիրաբ – 60.0 հազար դրամ

ընդամենը՝ 220.0 հազար դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. gmecavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> դեկտեմբերի 2015 թվականի N 42-Ա

«ՄԵԾԱՎԱՆԻ «ԶԱՆԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16. և 62. հոդվածներով՝ Մեծավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Մեծավանի «Զանգակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի ջեռուցման համակարգի անցկացման համար Մեծավան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 860.0 հազար դրամ:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ			
3	ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՋԱՏ			
4	ՆՈՒՐՈՅԱՆ ԷՄՄԱ			
5	ՍՈԼՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
6	ՓԵԹԱՔՉՅԱՆ ՄԱՐԵՏԱ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

24.դեկտեմբերի 2015թ.
գ.Մեծավան